



ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՈՒՄԻ

ԵՐ ԶԱՐԳԱՆՍԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԽԻԻ 66

13/26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ. ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՍ ԵՐ ԶԵՆԱՆ ԿԵԿԵՐ ՏՈՒՐՈՒ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի ։ Հոկտ. 13/26 ։ Թիւ 66

ՏԵՐ ԿՈՄԻՏԵԱՍ ՔԱՂԱՆԱՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱԶԻՏԱԿ

ՏԵՐ ԿՈՄԻՏԵԱՍ, ԵՐԱՆԵՂԻ՝ ՆԱԽԱՅԱԿ...

Ոհ, այս սիրտեց, սրբանուէր, անմահական ու փառելի անուամբ հնչումը՝ հոգեցունց մեղեդի մըն է իւրաքանչիւր հայ Սուրբապատ անհասի համար. մեր մօր գրկին վրայ անուշիկ օրօրներու միասխական մրմունջներուն մէջ լսեցինք զայն, իբրեւ հոգեքով, արտադրաւ, երկնան չիւն անուն մը: Ոհ ՏԵՐ ԿՈՄԻՏԵԱՍ, ինչ հիանալի դէմք, որպիսի՝ յալիւսակիչ պատկեր. մեր իւրաքանչիւրին մասադ սիոց կոյս երազներուն հրեւանքն էր այն. տիգրաւիւսիւն արեւոյդուային երանական տեսիլք մը, յստէս լուսանաճանց, բուրումնաւէտ, խղցրածուցիտ. հայրիկ մը՝ խանդակաթ, անվեհեր Մարտիրոս՝ արիւնտներէ բոսորազգես, Քահանայ զոհաբեր Գառիկն Աստուծոյ, արագահաս եւ հեզահամբոյր պաշտպան. որոյ ի տես մեր արթիւններն կը տրոփէին կը բաբախէին ի խինդ ի խինդ, եւ կ'երկար-

ուէին մեր բազկիկներն հեւ ի հեւ. եւ մեր աչուին կը պսնուին բոցավառ՝
այն երանելի գեղեցիկ դէմքին. ո՛հ, Տէ՛ր ԿՈՄԻՏՅԱՆ՝. Սերովբեանման քա-
հանայ. պաշտելի՛ նահաւակ. մեր օրինակը, մեր պարծանքը, մեր սէրը,
մեր հիացումը. Հայ Կաթողիկոսեան անհման փառք եւ ուրախու-
թիւնը, մեր ամենագոր եւ սքանչելագործ պաշտպանը, ձեմարիս
բարիքն ասող դաւանան ձեռքեր քու օրհնեալ գլխովդ կարծեցին քու
հարազատ գաւակներդ բաժնել Քրիստոսի մարմնին, Քրիստոսի մեծագեղ
Հարսէն՝ Հոռովայ Ս. Նկեղեցիէն. սակայն քու սուրբ արիւնդ քափուե-
ցաւ իբրեւ սերմ երկնաւոր՝ յարարս հողի մէջ եւ արդիւնաւորեց հա-
զարներ եւ բիւրի. որոնք ցանց նգնեցան քու հետեւորդ վրայէն՝ Վայել
անուիր։ Մեր կուրծքէն խնկաբոյր հառաչներ վերապայցան քեզ միշտ՝
մեր ամեն կարգի ու հասակի հաւատացեալներէն, որոնք հաւատարմու-
թեամբ եւ խոնարհութեամբ կը համբուրեն քու Սուրբ Գերեզմանիդ հրա-
շագործ հողը. եւ անդրդուելի վստահութեամբ կը կոչեն զքեզ յօգնութիւն՝
ի հոգեւորս եւ ի մարմնաւորս, մինչեւ այն երջանիկ օրը. յորում պիտի
սեռնեն քե Քրիստոսի Փոխանորդն յերկրի՝ յիսի բարձրացնէ զքեզ խո-
րաններու պատուոյն. Մինչեւ այն երջանիկ օրը մի՛ զլանաւ մեզ քու
հզօր բարեխօսութիւնդ, ո՛վ անզուգական Հայր, եւ ի պատիւ. զխառ-
մանդ, միացուր թուառաբար պառակտեալ սա քու սիրելի փոքրիկ հօգը,
ռահմիրայ փափաքելի մեծագոյն մ ու թեան՝ որոյ համար արիւնդ
սուիր...

Ահա այս զգացումներով է որ խմբագրութիւնս ամեն Հայ Կաթո-
ղիկէի եւրի հանդիման գործ մը կատարելու դիմամբ փափաքեցաւ,
Տ. Կոմիտասայ նահաւակութեան տօնին մերձեցալուն առթիւ, անոր հա-
կիրն բայց ամփոփ կենսագրութիւնը մատուցանել իւր ընթերցողներուն,
ոչ իբրեւ հոր ինչ՝ այլ նորոգող այն քաղցր յիշատակը զոր ամեն մեկեւ-
նիս գուրգուրանօք կը պահեն մեր արեւուն մէջ յանձնական տիպ անսի՛-
այս պաշտելի մարտիրոսին վարուց ազդեցութենէն։

Մեր շնորհակալիքը Գեր. Մաղարեան Յակոբ Վ. ի որ մեր մաս-
նաւոր հրաւերին վրայ աշխատութիւն յանձն առաւ պատրաստելու այս
կենսագրութիւնը, կարն քեւ բայց բովանդակելով կարեւոր մտնամաս-
նութիւնները, եւ զոր մեծաւ ուրախութեամբ հետզհետէ պիտի հրատարա-
կենք Կաթողիկէ Արձագանցիս մէջ, ուզելով հզօր Նահաւակին պաշտելի
սնուր արձագանգել ի հայրենի աշխարհ, հնչեցնելու համար զայն
մատուցող տիպը կոյս օրհնութիւններուն վրայ եւ դրուելու գոյն անոնց ան-
բիծ հոգեակներուն մէջ, ցլաւիտեանս եւ եւս...

ԽՄԲԳՐ.

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԵԱՌՆ ԿՈՄԻՏԱՍԱՅ ՔԱՀԱՆԱՅԻ ՔԷՕՄԻԻՐՃԵԱՆՑ

Կ. ՊՈԼՍԵՑԻ ՀԱՅ-ԿԱՅՈՂԻԿԷ ՎԿԱՅԻՆ

Գրեց՝ Ե. Վ. Մ. 1912

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

1902 թուականին՝ երբ Սամաթիոյ Կ. Հայոց Ա. Յղութեան եկեղեցւոյ Մեծ. Ժողովրդապետ էի, Տեառն Կոմ.առաջ կրանելոյն սիրով բորբոքեալ, յանկարծ միտքս ինկաւ համառօտ բանիւք վերաբարձել Տեառն Կոմիտասայ վկային Չերմեռանդութիւնը հաւատալելոց սրտին մէջ։ Ուստի առանց մտաբերելու իսկ ժամանակին դժուակ պարագաները՝ և կամ ինքզինքս խտրելով, սկսայ համառօտ երկասիրութիւն մը հիւսել։ Եւ սակայն Համբարձում չըջանին գրաքննութեան վախն ու սարսափն ալ մտքէն չհանելով, և գոգցես միամտութեամբ մը պիտի բռնեմ, սկսայ և աւարտեցի փոքրագիր երկասիրութիւնս որ սակայն Նահատակին վարքը չէր. վասն զի ժամանակին փափկանկատութեանց տեսակէտը զայն չէր թոյլատրէր, այլ պարզ Չերմեռանդական յորդորով մը այլեւայլ նկարագրութիւններով համեմեալ։ Օրքն մէկը առի թղթածրարս և գրաքննութեան (Մէտրիֆ) վաշտի թեան պաշտօնեաներուն յանձնեցի։ Երեք օր ետքը զնացի որ վերստանաւ ձեռագիրներս ապագրութեան հրամանովն միասին։ Ի՞նչ լսեմ... փոռաւոր մերժողական մը և այն խիտտ անախտ զէմքով։ Պաշտօնեայն ձեռքս յանձնելով ձեռագիրներս և շեշտելով մը «քապր մեմնու քր» ըսաւ, և երկարեց անտրակ մը զոր ստորագրեցի ձեռագիրներս եւ առած ըլլալուս ինչան։ Եւ տխուր մտածումներս թեռնաներքիւ ընկճած, գլխիկոր վերադարձայ ի տուն և սենեակս մտնալով և ձեռագիրներս պրփտելով, Աստուած իմ, ի՞նչ տեսնեմ, ամէն մէկ էջէն վրայ գրեթէ ծայրէ ի ծայր սեւ գիծեր քաշուած, սոքով չէն չնորձ նախադասութիւն մը, պարբերութիւն մը չէ մնացած, բովանդակ չէնք խանդարուած, աստղ, լոյս, կարմիր, թափօր, գումարում, արիւն, նահատակութիւն, պալատ են, են, են, ամբողջ արգիլեալ։ Վնասակար բառեր են եղեր, դեռ ինչէր։ Նետեալքս գծուած են չնորձակալ եղայ որ գէթ ձեռագիրներս ինձ յանձնեցին։ Ի տես այս ամենուն, ճշմարտապէս յուսահատեցայ։ Օր մը դիւմամբ գրիչս առի ուղղուեցայ Սէրայ Պարսու ըսուած յուսահատներուն վայրը, ինչ գրիչս երկու ծայրէն ափերովս բռնեցի և երկու բոյթերուս ծայրերը իրար մօտեցնելով գրչին միջովայրը ուժով մը կոխեցի, կռնչեց, և երկու կտր եղաւ. ծով նետեցի. ուր ալիքներու վրայ բեկեալ նաւու մը տիրազգեցիկ բեկորներու նման տարուբերել սկսաւ։

Սակայն հիմա որ նորահաստատու և ալեկոծու Սահմանադրութիւնը գէթ քիչ շատ գործնիրը կը քաջալերէ. ես ալ նոր գրչով մը պիտի ճգնիմ ըստ իմովսանն կարողութեան Տեառն Կոմիտասայ Կ. Պոլսոյ Մեծի վկային գերբնական արիւնքիւնը դրուագել. և ցիւանս պարսաւել. անիծել Ոսոխացը՝ ստորին, պժգալի, եպերելի. անարգ ցածուծիւնը, նախանձին, սխալալուծեան վրիժառու արարքն, որով հրէայնեբու պէս թափեցին Աղբարին Ս. արիւնը որ մինչեւ ցվերջ աշխարհի բողոքէ պիտի իրենց և իրենց որդեոցը դէմ:

Տէր Կոմիտաս քաջ նահատակին վրայ լինչ որ պիտի գրեմ. բոլորն ալ քաղած եմ գլխաւորաբար երանելւոյն ժամանակակից ութ երեւելի — մին բողոքական և եօթն կաթողիկէ — անձնաւորութեանց ձեռագիրներէն որք կը պահուին զգուշութեամբ ի դիւանատան Կ. Հայոց որ ի Բերա, և են անուանք պատմաբան հեղինակայս. 1. Օսմանեան կառավարութեան մօտ Գազդիոյ երեւելի դեսպան ի Կ. Պոլիս՝ Ֆէրրիօլ Մարքիզ: 2. Լատիններէն Քարբուչին միսիօնար Հայր Յակնիտոս Պրանչիսկոս Բարիզեան: 3. Նկարիչ Պրանչիսկոս Վալմուր: 4. Անգղիացի ճանապարհորդ Աւարայ ար լա Մօթրէյ, որ բողոքական է: 5. Հայ կաթողիկէներէն, Հայր Մատթէոս Մխիթարեան միաբան: 6. Սարգիս Յպիսկոպոս Երուսաղէմայ: 7. Տիրացու Մաղաթիա Ճէվանիրճի: 8. Տիրացու Եղիազար Անկիւրացի:

Ղալաթիա, Հոկտեմբեր 1/14. 1912

ՅԿԲ. Վ. ՄԱՂԱՐԵԱՆ

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՄՈՋԲԱՆՑ ՎՐԱՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝

Վ.

«Քու բարեպաշտութիւնը անկեղծ եւ հաստատուն ըլլայ,

«Եւ Քու ամէն խօսքերուդ նշմարտութիւնը նախաբոռ քաղմի:»

«Քու բարեպաշտութիւնը անկեղծ եւ հաստատուն ըլլայ»

Ճշմարիտ բարեպաշտութիւն մը ունեցիր, տալիս որչափ ալ հազուագիւտ թուի, եւս առաւել պատուաւոր և յարգանաց արժանի է: Ամբարիշտը, խառնագնացը, քանի մը օրինակներու նայելով, կ'ուզէ հաւատալ թէ, անոնք որ աւելի առաքինի կը թուին, առաքինի մարդ ըլլալ կը կեղծեն. իրմէ աւելի ուրիշ բան չունին, եթէ ոչ իրենք զի-

րենք ծածկելու աւելի յաջողակութիւն : Թողունք բարեպաշտութեան այս թշնամիները որ աշխատին իրենց խղճի խայթերը խեղդելու , իրենց անկարգութեանց մէջ իրենք զիրենք արդարացնելու , ջանալով իրենք զիրենք համարելու թէ . առաքինութիւն չկայ , որպէսզի մոլութիւնք իրենց աչքին աւելի արդարանայի երեւնայ : Իրենց թողունք ուրիշներուն վրայ գէշ մտածելու . ասուք միտարութիւնը , ինչպէս որ իրենց վրայ կը մտածուի : Կրնանք միթէ յուսալ բանականութեան ձայնը լսել ապա այնպիսի մարդիկներու , որոնք չատենց ի վեր , ինչպէս իրենց բնթացքով , նոյնպէս նաեւ իրենց խօսքերով , զանի արհամարհել կը դաւանին , և ուրիշ մարդիկներու վրայ անոր համար այդ աստիճան յոռի գաղափար ունին . որպէս զի իրենք իրենց վրայ ունեցածէն նուազ սոսկան : Ո՛չ , ոչ . ինչ որ ալ զրուցին . բարեպաշտութիւնն կեղծաւորութիւնք ծածկող դիմակ մը չէ միշտ : Ասանք եթէ կարենային վկայ բլլալ հաստատապէս բարեպաշտ հոգիներու Վիճակին , եթէ կարող ըլլային անոնց անոնց դիտաւորութեանց որքութիւնը , անոնց զգացումներուն ազդեցութիւնը , անոնց զոհողութեանց վեհանձնութիւնը , ընդհակառակն անոնց մասին հիացմամբ պիտի լեցուէին , և ոչ միայն զանոնք չպիտի արհամարհէին , այլեւ անոնց նկատմամբ պիտի տածէին այդ պատկառանքն ու յարգանքը , զոր հարկ և պատշաճ է մատուցանել առաքինութեան : Եթէ կեղծ բարեպաշտութիւնը ճշմարիտէն աւելի ճանչցուած է , պատճառն այն է որ , ասիկա ինքզինք կը ծածկէ , ինչու որ խոնարհ է . իսկ միւսն ընդհակառակն , ինքզինք ցուցնել կ'ուզէ . ինչու որ ամբարտաւան է : Եւ . թէպէտեւ ճշմարիտ առաքինութեան գրեթէ ամէն արտաքին երեւոյթներն ունենայ , սակայն ուշ կամ շուտ կեղծիքը կը մտնուի , և իւր իսկութիւնը կը յայտնէ . քողն , որով ինքզինքն կը ծածկէ , երբեմն ինքնիրեն կ'իյնայ , այնպիսի կերպով մի : որ ուրիշներու արհամարհանքն կուգան յաճախ կը միանան անկարգ խղճի մը խայթերուն : Կրօնքին իր վրայ դրած պարտույ զանցառութիւնը արդարացնելու համար իւր զբաղմանց մեծութիւնն ու շատութիւնը պատճառ բռնելու չէ . վասն զի ստոյգ է թէ եթէ անկեղծութեամբ ուզեր , միշտ բաւական ժամանակ պիտի գտնէր խոհեմութեամբ կատարելու համար բարեպաշտութեան սովորական պարտքերը , առանց իւր վիճակին յատուկ պարտքերը զանց բնելու , և զասոնք մանաւանդ թէ աւելի լաւ կերպով պիտի կատարէր : Այնչափ վայրկեաններ կան , զորս մարդիկ ընդունայն և նուազ կարելի որ բաներու համար կը վատնեն : Ո՛վ թագաւորական գահին վրայ բազմող աւուր Նոյիսի, ոսկեմ աւելի մեծ զբազմունքներ երբեք ունեցաւ , որ սակայն միշտ աւելի ճշդապահ եղաւ իւր վիճակին ամէն պարտքերը կատարելու մէջ . և երբեք զանց չընելու և ոչ մին իւր բարեպաշտական գործոց : Ճշմարիտ արժանեաց գործոյն (Traité de vrai mérite) հեղինակն , զոր ոչ ոք կրնայ ստուգիլ իւր .

րեւ բարեպաշտ ամբաստանել, կ'ըսէ թէ, ծերունի զինուորականներ ճանչցա՛ւ է, որոնք համոզուած էին թէ, հաշիւը վտանգներու մէջ, որոնցմէ առանց տեսակ մը հրաշքի չէին կրնար անվնաս ելլել, իրենց փրկութիւնը պարտական էին այն կանոնաւոր ճշդութեան, որով, իրենց մանկութենէն ի վեր, բարեպաշտութեամբ կ'ըզուցէին այն ազօթքները, որոնք իրենց հոգւոյն մասնաւոր ու զօրութիւնը կը կազմէին: «Կր հաւատամ թէ, կ'ըսէ, պատարագը լսելու յաճախութիւնը՝ կենցաղավարութեան ամէն կողմանց ազդեցիկն է: Դամբարանութիւն ընող բարձր աստիճան սպաներու հանդիպեցայ, որոնք թէպէտեւ առաւօտեան ժամը չորսին մեկնելու ստալուած սակայն աշխարհիս և ոչ մէկ բարիքի մ'համար յանձնառու պիտի ըլլային իրենց այս պարտուց մէջ թերաւ: Նալ: Ասոնք գիտէին տալ «զկայսերն Կալսեմ», և զԱստուծոյ՝ Աստուծոյ:» Ասկա մեղի կ'ապացուցանէ թէ, որչափ կարեւոր է կանուխէն կրթել տղաքները բարեպաշտութեան մէջ, և զանոնք վարժեցնել նոյնին ամէն պարտաւորութիւնները հաւատարմաբար կատարելու: Առաջին սուրբութիւններն ընդհանրապէս աւելի տեսական եւ: Նոր աման մը իրեն մէջ դրուած առաջին հեղու կին հոսը երկար տաեմ կը պահէ: Եւ որով, հետեւ մենք կ'ուզենք բարեպաշտութիւնը սիրելի ընծայել, պէտք է որ մեծապէս զգուշանանք զայն այդ տխուր և մթին գոյներով նկարելէ, որոնցմով ոմանք զայն ներկայացնել կը յօժարին: Կար՛ խիստ բաւարարական մը քիչ սուրբեր կրնայ ընծայել: Այդ բարոյակոմոր պատճառ կ'ըլլայ մոլութեանց մէջ, յարատեւելու գիւրութիւնը՝ նոյնէն դուրս ելլելու և առաքելութիւնը գործադրելու ղեկարարութեանց նախադասելու: Ծայրայեղ խտութիւնը, սովորաբար ուրիշ բանի չի ծառայեր, եթէ ոչ բարեպաշտութիւնը և կրօնքն իսկ ատելի ընելու: Ստիկա խառնագնացներու համար ծաղու և տկարներու համար ալ զայնթակզութեան առարկայ մ'է: Խառնադնոցներն մեծապէս գոհ կ'ըլլան այդպիսի ծայրայեղութիւններէն բանի մը չհաստատուել, և մտածանդ բան մը չընելու իրաւունքն ունենալու համար, և, առաջարկելով թէ իրենցմէ չափազանց բան կը պահանջուի, ամէնն ալ մերժելու պատճառանք մը ունենենալու համար: Տկարներն այսպիսի կարի խնամ սկզբունց մասն, սխալ համոզում մտաց, սխալ խնդ մը կը դայտնեն, որոնք իրենց ճշմարիտ սփրնի գործել կուտան: Այդ սխալէն ու զլուելու համար առաջիններն և երկրորդներն թո՛ղ Սալէզեան Արքայ Փրանկիսկոսի արդնի թիւ վրայ գրած գեղեցիկ գիրքը կար լան(1): Հոն պիտի տեսնեն թէ ճշմարիտ բարեպաշտութիւնն այնպէս դաժան, այնպէս խիստ չէ, ինչպէս որ իրենց ներկայացուցած են թէ Տիրոջ լուծը քաղցր է և բնուն ալ թեթեւ: Թէ առանց աշխարհիք ըլլալու, հոս է աշխարհի վրայ սուրբի, և թէ հոս է աշխարհի մէջ բարեպաշտութիւնը ի գործ դնել տ

(1) Ներածութիւն ի շեմնոսնդ կեանս:

ռանց պատշաճութեանդ դէմ գործելու, առանց ծաղրելի կամ արհամարհելի լլկալու: Պիտի սորվին մանաւանդ թէ, զգօն և լուսաւորեալ բարեպաշտութիւնը չուզեր ոչ տաղտկալի խտապահանջութեամբ մշակելի նեղցնել երկնից ճամբան, զանկաւ անհնարին ընելու աստիճան, և ոչ ալ ծարայեղ թուլութեամբ մը զայն կար՝ զիւրին լնծայելու աստիճան ընչլայնել: Այս երկու ճամբաներուն մէջ, որոնց մէջ յուսահատութեան, իսկ միւսն խաւաւակ վստահութեամբ մը կորստեան պիտի ստնէին. ճշմարիտ բարեպաշտը, կ'ըսեմ, միջին ճամբան կը բռնէ, թէ՛ իրեն և թէ՛ ուրիշներու նկատմամբ:

(Շարունակելի)

Ն. Մ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

ՎԻԵՆՆԱՅԻ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Շար.)

Հակառակ տեղատարափ անձրեւներուն, ամբողջ Վիեննա եռ ու զեռ կը թնկայ. հանրային թէ անհատական շէնքերը, հարուստին ապարոնքը՝ ինչպէս աղքատին հիւզակը դարդարուած են համակ Քահանայապետական ու ազգային դրօշներով: Այնպէս որ, հակակղերական թերթերն անգամ ստիպուած են խտտովանելու կրօնական այս մեծ ցոյցին վեհութիւնը, և ընդունելու՝ թէ ամէնէն հոյակապ և ամէնէն զօրեղ ապացոյցն է աւ որ երբեք տեղի ունեցած ըլլայ արդի Ժամանակներու մէջ՝ դէպի Ս Պետրոսի Աթոռ եղած ջերմեանդ յարումին:

Սեպտ. 11ի իրիկունը. Վիեննայի Կաթողիկէ Տիկնանց Միութեան կողմէ հանդիսաւոր ընդունելութիւն մը կատարուեցաւ Աւկադեմիկ մէջ:

Հակակղերականներու կողմէ ամենափոքր ցոյցն անգամ չի նշմարուել:

Կաղմակերպիչ Յանձնախումբը հրաշքներ գործած էր բոլոր հրաշիրեալներն ալ պատշաճօրէն զետեղելու համար: Վիեննայի մէջ այս հանդիսութեանց առթիւ եկող հիւրերու թիւը կ'ըստի թէ 150,000 կ'անցնէր ամէն լեզուէ և ամէն տարազէ:

Մարդ պիտի կարծէր թէ այս պահուս ինք կ'ապրի Միջին դարու այն շերմեանդ ու ասպիսական օրերը. այսպէս տեսնելով եկեղեցական և այս աշխարհի երկու բարձրատիճան մեծութիւններու զիրար խաչաձեւելն ու սիրալիր զիրար ընդունիլը, Վիեննա ազնուապետական, ասպետական ու շնորհալիօրէն յոյժ մարդասէր քաղաք մըն է: Արտա-

կարգ խառնուրդ մը իշխաններու, կարգինալներու, քահանաներու, պաշտօնատարներու և ամենազգի զինուորականներու, արքունիքին ու պալատան յատուկ անձնաւորութիւններ, ամէն ձեւերով և ամէն գոյններով ապրաւներ՝ հոն գտնուող զանազան ազգութիւններուն, և Աստուած դէտէ թէ աշխարհի վրայ չկայ կախողիկէ անկիւն մը՝ որ չունենայ հոս իր ներկայացուցիչ պատուիրակները, արքունիքի սեփական նշանազդերու, քահանայական նշանազդերու, ու բանւորի յատուկ նշանազդերու, ամէն ոք կր խաչածեւէ զիրար, կր բարեւէ և իրարու հետ կր տեսնուի Վիեննայի փողոցներուն մէջ առանց հարատու թեան ու վէտութեան, առանց նախանձի և առանց վախի, ինչու որ ամէնքն ալ այնպիսի հոգեկան հաւատար տրամադրութիւն մ'ունին՝ զոր մշայն Ս. Հաղու դութեան ներշնչած սէրը կրնայ իրականացնել՝ ամէնուն հօր ու պաշտպանին, մեր տիրոջ՝ սիրող Յիսուսի ոտքերուն տակ:

Համաժողովին առջեւ ընդունուի գումարումը, բացման նիստը, սեզի ունեցաւ Սեպտ. 11-ի լրիկունը, Գմբեթարդ դահլիճին մէջ. ճարտարապետական ահագին սրահ մը՝ սովորական ցուցանադէմներու յատկացուած և որ չէր կրնար ասկէ աւելի զարմանազան ու մրեւնոյն առեն միակերպ ցուցադրութիւն մը տեսնել իր բոլորչի շրջապատներուն մէջ:

Բրազէրի այս Գմբեթարդ դահլիճը չքուլսրէն պնսուած էր Վերօք, աւերութեանց յատկացուած մեծ վերնատան վրայ, տարաշխարհիկ տունկերու անտառի և բււրումնաւէտ ծաղիկներու մըջեւ դուրս կը ցայտէլն Պիոս Ժ. Քահանայապետին ու Փրանկիսկոս-Յովսէփ Կայսեր պատկերները, հեմին մէջ պատրաստուած էին բոսորագոյն թաւիչ երկու բազկաթոռներ, Քահանայապետին ու Կայսեր ներկայացուցիչներուն համար:

Դահլիճին մէջ պատրաստուած էին նաեւ ուրիշ 10,000 աթոռներ և 50 վերնատոններ՝ հրաւիրեալներու յատուկ:

Ժամը երկու քէն սկսեալ 20 ՊԱՅ հոգի արդէն գրաւած էին իրենց տեղերը Գմբեթարդին ներքեւ, Յիրաւի վեհաշուք տեսարան կը պարզուէր հոն:

Կայսեր կողմանէ իբր ներկայացուցիչ եկած էր Պետրոս Փերդէ-Նանտու Արժիւքը: Հոն էին եկեղեցական անձնաւորութիւնները՝ Առաքելական Պատուիրակի նախագահաւթեալը, շրջապատուած Մօնս Պէօրն Ուէսդմընսդերի Կարդինալէն, Բարիլի Կարդինալ Մօնս, Ամէիլէ, Պրէսլաւի Կարդինալ Մօնս, Բօլիէ, Վիեննայի Կարդինալ Մօնս, Նակիէ, ու Մալինի Կարդինալ Մօնս, Մէրսիլէ, Սոյն ծիրանաւորներու չորջ քրեղ գրասանք մը կը կազմէին լուսամթիւ Եպիսկոպոսներ՝ ընդ որս և Ամեն Հոգ. Տիրոջ ներկայացուցիչ Արհի. Գոյուհեան և Հայ Կաթողիկէ նախարապետութեան ներկայացուցիչ Արհի. Իսրայէլեան Եպիսկոպոսները և անթիւ բազմութիւն մը ամէն երկրէ և ազգէ կրօնաւորներու և քա:

հանաներու : Ներկայ Արքեպիսկոպոսներու Եպիսկոպոսներու թիւը 150, կ'անցնէր : Յետոյ կուգային Արքուէնաց , Պետութեան , Ատենակալութեան , Բանակին ու Ծովային նախարարութեան աւագ պաշտօնատարները :

Հո՛ն ներկայ էին Մարիա Թէրէզա , Մարիա Ժոզէֆին , Իզապէլ , Մարիա Աննուցըլաթա , Կապրէլլա , Վալէրիա , Արհիդքսուհիք և գահաժառանգ Արհիդքս Փրանկակոս-Ֆէրտինանտ :

Հոն կր'նշմարուէին նաեւ ի մէջ այլոց , Հանրային Կրթութեան նախարար Հուսարէք , Ելմտական նախարար Պալէսթրի , ու Կալիցիոյ նախարար Տրիօշ , նոյնպէս Սուրբին Աւստրիոյ կառավարչ Պառօն Պիէնէրթ , Բաղարապետ Նայմայէր , Պելճիքայի Կրթական նախարար Հէլլըրթ , գաւառական մարաշափա Իշխան Լիխթինշիլայն և ուրիշ շատեր :

Բանակայապետական Թուղթը սրտ հարազատ թարգմանութիւնն արդէն տալինք , նախ լսողներէն լեզուաւարդացուելէ վերջ , յետոյ նոյնին Գերմաներէնն ալ արտասանուելով բուն կերպով ծափահարուեցաւ Կեցցե՛ Պիոս Ժ . Կեցցե՛ Հաղորդութեան Խորհրդոյ Բանակայապետը աղաղակներով :

Աննկարագրելի եղած էր նաեւ Պատուիրակ Կարգինային արտասանած հիանալի ճառին յառաջ բերած խանդավառութիւնը : Պահ մը բոլոր ունկնդիրները՝ կարծես զուպանակէ մը մղուած ոտքի ելնելով մալեգնօրէն կը ծափահարէին երկարածիկ : Վիեննայի լոնակիչք իրապէս հիասթափ մնացած էին տեսնելով թէ ի՞նչպիսի անկաշկանդ պերճախօսութեամբ Պատուիրակ Միրանաւորը բնիկ գերմանացւոյ մը պէս կը խօսէր գերման լեզուն :

Իր ճառին այն կէտերը՝ մանաւանդ , ուր ի վեր կը հանէր Հապըսպուրկեան Տան բարեպաշտութիւնն ու Չերմեռանդութիւնը Ս . Խորհրդոյ հանդէպ , իր գազաթնակէտին հասուցին խանդավառութիւնները : Այնպէս որ , Կարգինայն անգամ ծայր աստիճան յուզուած էր , ու կ'ըսէր յետոյ՝ թէ կեանքին մէջ առաջին անգամն էր որ ներկայ կը գլուխուէր նման տեսարանի մը :

Գեղեցիկ էր նաեւ Կարգինայ Նովլի ճառը , ուր առէնէն յառաջ ողջունելով Կայսեր ներկայացուցիչը , Պետրոս-Ֆերտինանտ Արհիդքսը , մըսա Արհիդքսերն ու Արհիդքսուհիները , Վաեմ , Միրանաւորները , Արքեպիսկոպոսներն ու Եպիսկոպոսները , Արքուէնաց ու Պետութեան բարձր պաշտօնատարները , չնորակալութիւն յայտնեց ամէնուն ալ որ փութացեր էին հաւատքի ու Չերմեռանդութեան այս հանդիսաւոր ցոյցերուն : Շնորհակալ եղաւ նաեւ արէն անոնց՝ սրմնք ո՛ր և է կերպով գործակցած էին Համաժողովին յաջող ելք մ'ունենալուն :

Շեշտեց մանաւանդ , թէ քաղաքական ցոյցի հանգամանք բնաւ չունի սոյն Համաժողովը , այլ սոսկ բոլոր Կաթալիկ աշխարհէ եղած պարզ կրօնական ցոյց մըն է ի պատիւ իր Փրկչին :

Ծափահարութիւնները աւարտելուն, խօսք առաւ. Հանրային Կրթութեանց ու Կրօնից նախարար Տօքթ. Հուսարէք, և ողջունեց Համաժողովը յանուն Կառավարութեան: Յետոյ վեհօրէն ցուցադրեց Վիեննայի Կարեւորութիւնը բաղդադմամբ աշխատի և արեւմտեան քաղաքակրթութեան բոլոր մըլտ քրիստոնեայ քաղաքներուն, և ընդարձակօրէն բացատրեց թէ, ինչպէս Կարելի էր համաձայնեցնել Կաթողիկէ կրօնքը արդի պետական կենաց, բղձանքներուն ու փափաքներուն հետ:

Երկար ծափեր ողջունեցին ճառասացին խօսքերը, որու յաջորդեց Իշխան Լիխէնշթայն: Ասի նիւթ ունէր գովել Կաթողիկէ մամուլը՝ որ այնքան ձեռնառու գտնուեցաւ լուս յաջողցնելու Համաժողովը: Սրտագին ողջոյններ ուղղեց ժողովին մէջ ներկայ գտնուող մամուլի ներկայացուցիչներուն, այն չորրորդ իշխանութեան՝ որ, մանաւանդ Աւստրիոյ մէջ, բարոյից և յառաջդիմութեան ազլիւնն է: Ակնարկելով յետոյ քաղաքապետին ճառին, լուս թէ, ամէն Կաթողիկէ պէաք է ծափահարէ զայն, ինչու որ անի կրցաւ թարգման հանդիսանալ զգացումին Վիեննայի այն ժողովուրդին՝ որ կ'ուզէ միշտ Կաթողիկէ միաւ հակառակ նոյն իսկ շատերու այն ջանից որոնք կը փափաքին չեղել զանի քրիստոնէական ուղիէն:

Պէլճիքայի արքայական նախարար Ն. Վ. Ժօրժ Հէլլըքութ ևս ճառ մը պիտի արասանէր յանուն օտարազգի ժողովականներուն. ողջունելու համար Վիեննա քաղաքը և շնորհակալ լլլալու իրենց եղած փառաւոր ընդունելութիւնէն, բայց դժբախտաբար արգելուելով ընդունած թարմ քօթաբեր մէկ լուրէն, անոր տեղ խօսք առաւ փաստաւորան մը, իրը պերճախօս Նիանալիօրէն կազմուած, և որուն ճառը՝ Պատուիրակին ճառէն վերջ, անչուշտ ամէնէն գեղոյցիկը և ամէնէն ազդեցիկն էր: Ասի նախ շնորհակալութիւն մատուցանել կ'առաջարկէ ամէնէն Ս. Քահանայապետին հասցէին՝ որ մանկանց հալսրդութեան այնքան ջիւղ մղում մը տուաւ: Կ'անցնի յետոյ գոյարիկ դրուպը Ն. սելու. Աւստրիոյ ծերունի Կայսեր, որու կեանքը «ամէնէն հմայիչ տեսիլք մին է իր իսկ օրինակին զօրութեամբ թագաւորոյ Վեհապետի մը» և որու թարմ ու առայց ծերութիւնը կարծես նոր կեանք մ'առած է Կաթողիկէ և Ս. Հաղորդութեան ակնադրիւրէն: Եւ անա ճառախօսը Նիանալիօրէն դիւթիզ գաղափարանկարներու շարք մը կը բուլորէ ունկնդիրներուն առջեւ: Այս նկարներուն մէջ կը տիրապետէ մանաւանդ պատկերը: Վիեննայի գետին՝ կապոյտ Դանուբին որ կը գլէ կ'տանի իր ալիքները լիւրաւոր երկիրներէ՝ անոնց հետ մղելով նաեւ յիշատակն ու օրինակները հազուագիւտօրէն Կաթողիկէ քաղաքի մը՝ մինչեւ իսկ իր բարբարոս վիճակին ամէնէն յետին հետքէն սկսեալ: Յոյժ գեղեցիկ կերպով կը պատկերացնէ նաեւ նոյն ինքն Վիեննա քաղաքը, բլուրներու վրայ նստած, մինչ Ս. Ստեփաննոս Մայր Եկեղեցի:

ցին «որ անոր սիրտն է, կը կազմէ ուխտի տապանակը՝ Յիսուսի-Քրիստոսի իշխանութեան կեդրոնը»։ Վերջապէս կը գծէ յիշատակը Միջին Դարու այն կայսերական իշխանին՝ որնոր իմանալով իր դղեակի պարիսպներուն խորտուել վիճակը, փող հնչեցնել տուաւ, և իսկոյն հոն դիմեցին իր բոլոր հպատակներն ամէն կողմերէ կենդանի պարիսպ մը ձեւացնելու համար իրենց պաշտած իշխանին և անոր Տանը։ Իշխան մը՝ որ սչրով կը տիրապետէր։ Որտա յաջող էր այս պատկերը որու իմաստը դժուարին չէր բացահայտել։ Ինք քրիստոնեայ սիրտերը, երկոյս սուրբ Գոհութեան խորհրդով՝ զօրացած, ամբողջին մը սկսի ձեւացնեն շուրջը մեր վրայ գործադրացող այն Քահանայապետին՝ որ փառաւորապէս կ'իշխէ Կաթողիկէ եկեղեցւոյ վրայ։

Իրաւամբ այս մաքուր ու զտուած ֆրանսերէն լեզուով խօսուած ճառը սքանչանօք կ'ընդունուի ամէնէն փոթորկալից ծափահարութեան մը մէջ։

Հոս պարտք կը համարինք նաեւ յառաջ բերել Կրթական նախարար Տօգթ. Հո սարէքի ճառին հարազատ թարգմանութիւնը իր աւագ կարեւորութեան համար։

«Ինձի համար բարձր պատիւ մը կը նկատեմ յանուն կառավարութեան բարի գալուստ մտայել կարենալու համար ժողովիս փութացող եկեղեցւոյ բազմաթիւ իշխաններուն, այնքան պէտք ունեցողներուն ներկայացուցիչներուն, այն ամէնուն՝ որոնք ծնունդէն, աստիճանաւ ու դիրքով լատացոյն համբար կը վայելեն մեր հայրենեաց մէջ եւ ես, իբր նախարար հանդիման կրթութեան եւ կրօնից (ծափ)։ Կ'ողջ լնեմ ամէնքն այլ յանուն մեր արժանիքի Վեհապառ Կայսեր կառավարութեան, որնոր իր կայսերական պաշտպանութեամբ եւ իր բարձր քեւարձութեամբ բարեացակամութեան երաւիքի տուաւ ներկայ համաժողովին, որ մասին սրդէն նախորդ ասեմախօսները արայայեցին իրենց ընդհանրական զգացումները (չիմ ծափեր)։

Շնորհակալութիւն անոր՝ որմոր, ինչպէս կ'երգեն մեր ազգային երգին մէջ, — Մեր նախնեաց հաւաստին վրայ կեցած, կը վարէ մեզ իմաստուն ձեռքով մը — (Կրկին ծափեր)։ Այսօր Վիեննայի ուղղուած են բոլոր կաթողիկէ ժողովրդոց աչիւնք, եւ ամենուսեմ տւելի եւս ուժգին կը բարձրեն Կաթողիկէ հաւաստեալներու սրտերը խորհելով այնքան վեհաժող համախմբումներ, որոնք Աստուծով առաջիկայ կիրակի իրենց զազաքնակէսին պիտի հասնին՝ Ս. Հաղորդութեան պիտիտի թախտով մը, որու նմանք երբեք տեղ մը տեսնուած չլլայ։

Երբ կը դիտեմ հոս նաւաւոց քիւրաւոր հաւաստեալներ մեծարելու հալմար մեր մէջ բնակող Փրկչին խորհրդաւոր մարմնոյն տեսակները, երբ կը տեսնեմ բոլոր այս հազարաւոր անձեր համախմբուած մեր հայրենեաց, մեր սիրելի բազմաթիւ Վիեննայի հողին վրայ, մէկէն մտնի մէջ կ'ստրկեմ այն բազմաթիւ յեղափոխումներն որոնց երկակայ եղան այս եկեղեցի իրենց հաւաստին զարգացման եւ իրենց բնկերական կենաց կազմակերպութեան պահուն։ Ու մենք այժմ համախմբուած կը գտնենք մենք զմեզ՝ դարեւ ի վեր տեսնուած հողի մը վրայ։ Մեր կայսրութեան նահանգներէն շատերը հազարեակ մը տարիներէ ի վեր բուրած են բիւստոսական հաւաստին, Փրկչին վարդապետութիւնը լնդունելով ուրիշներ՝ ինչպէս Ակուիլէա, Եուզապիում եւ Լաւէազում, Հոռովայեցւոց ժամանակէն ի վեր բնդրկած են Աւեսարմի վարդապետութիւնը, եւ ունեցած են ականատես Վիեննա՝ որոնք մարտիրոսութեան պատկն ընդունեցան, ինչպէս Սեւերինոս, Ռուբենոս, Վիլիլիոս, Կիւրեղ եւ Մեղասիոս։

Հոս Մեծն Կարդոս իր անթիւ զօրաց խումբերով մեծ հեռաստութեամբ մը ուղեց անպարս' ի պատուար մը կանգնել' ի պաշտպանութիւն արեւմտեան քաղաքակրթութեան ու քրիստոնէական հաւատքին: Այս տեղէն մեկնեցան այն խաչակրաց բանակներէն շատերը որոնք կ'երթային մեր Փրկչական սուրբ վայրերուն շրջելու: Այս հոգին վրայ Յովնաննէս Պաքիսդացին տարածեց քրիստոնէութիւնը իր բարոզներով: Հոս Վիեննայի մէջ վնասեցան աշխարհի ճակատագրերը՝ երբ խնդիր եղաւ հագելու մշակման պահպանումը ապահովելու աշխարհի մէջ:

Եւ անհաշիւ կերպով չէ որ մեր Վսեմաշուք Հովնի Կարդինալ Նակլի կամով ճիշդ այս օրերուն մէջ հոս հաւաքաւորութեամբ ենք մէկ (ծափեր), անմոռանալի օրեր այն պատերազմներուն՝ զորս արդէն յիշատակեց Ն. Վ. Առաքելական սուրբ իրաւր: Մեծն հոս կը յիշենք Աւստրիոյ դոքսին զաւրիւնը քաղաքային Յովնաննէս Սոյիլեֆիի հրամանաւարութեան ներքին պատերազմով այն բանակները՝ որոնք Վիեննայի պարսպներուն առջեւ կանգ առնուլ տրին թեման ոյն յառաջացող զուեղերուն, ապահովելով եւրոպայի արեւմտեան քաղաքակրթութեան բարիքները:

Երախտօք կը յիշենք նաեւ այսօր Ինքնովիենիոս ԺԱ. Վերազայն Քահանայապետին ունեցած դերը այս վնասական կռուի մէջ, եւ որու յիշատակը բնաւ մոռցուած չէ Վիեննայի մէջ (ծափեր):


Անցելոյն այս յիշատակները կրնային դեռ ամբողջացուիլ ուրիշ շատ մը յիշատակներով. բայց կը բաւեն, զի անոնց շնորհիւ է որ ներկայիս անգամ Աւստրիոյ Կաթողիկէները սերտօրէն միացած են երեղեցւոյ Գերագոյն իշխանութեանց հետ միացած սիրով ու յարգանքով Ս. Հօր Պիոս Ժ.ի հետ՝ որ քսաւ թէ կ'ուզէ *մոռցիլ անկն ինչ ի քրիստոս*:

Ներկայ ժամանակը պատեն չէ արտաքին ցոյցերու, այլ մանաւանդ հարկ անհրաժեշտ է աշխարհի կրօնական կենաց կեդրոնացման, սակայն հակառակ ասոր, ներկայ փառաւոր Համաժողովը արտաքին ցոյց մըն է արժանի մեծ ուշադրութեան: Առանց ո՛ր եւ է մէկուն հանդէպ պակասով լրջալու յորդաննի մէջ, Միապետութեան մէջ զտնուող եւ օտար ազգերու պատկանող կաթողիկէք հաւաքաւորութեամբ են իրենց սկզբանց եւ իրենց լողանաց միութեան հանդէպ կատարելու (*ընդհանուր ծափեր*):

Թո՛ղ ուրեմն այս Համաժողովը առաջ պատկեր բերէ յօգուտ իրապէս անոր մասնակցողներուն եւ անոնց՝ որոնք հոգւով մասնակից եղան. թո՛ղ ան փայլի նման յաջող ասպի մը՝ որու բարեբար լոյսը առաջնորդէ զիրենք ու կոնգուն բռնէ՝ որպէս զի կարենան լսել Փրկչին երկնային ձայնը: Փառք Աստուծոյ երկնից մէջ, եւ խաղաղութիւն երկրի վրայ այն մարդոց՝ որոնք յարի տրամադրութիւն ունին (*ընդհանուր ծափեր*):

Աստուծոյ փառքը եւ աշխարհի խաղաղութիւնը, այն խաղաղութիւնը զոր Աստուած միայն կարող է տալ, անոս այս թող լրջայ Վիեննայի Հաղորդութեան Համաժողովին պատուը:» (*Անգիրք որոտագին ծափեր. Շատեր ոտի կ'ընին նախաւարը ընդհանուրիւ համար*):

(Շարունակելի)



Շ Ե Ր Ք Ո Ւ Ս

Դանիէլ Վարուժանի նկատմամբ մեզ տրուած տեղեկութեանց մէջ (թիւ 56) գրուած էր թէ նա կենակցած է իրմէ դաս առնող աղջկան մը հետ եւ թէ անօրէն եղած է Բրգնիկոյ վարժարանին: Արդ. արժանաւաւան անձինք կը տեղեկացնեն մեզ թէ այս երկու կէտերը միայն անճիշդ են, թէեւ ինքն էջմիածնական պատկով ամուսնացած է:

Սակայն Վարսի ժողովին կրօնապետի և Դաշնակցական գործիչ ըլ-
լալը զորս նոյն անձինք ևս հաւատեցին . թէպէտեւ եկեղեցւոյ դէմ
ապստամբ և լանադրեալ անձերու գործին կուգայ իրրեւ անօրէն իրենց
յանխրաւի յաիշտական գաղտնիքն , բայց և այնպէս սարսեցնելու է ուղ-
ղափառ ծնողքը սյուպիսի անօրէնի մը յանձնելու իրենց սիրասուն զա-
ւակներուն դաստիարակութիւնը :

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ռ Վ Ս

Սորոգան Քահանայապետին բժշկապետ քրօնէսոր Յովսէփ Բէթաշի փոխաններ է-
լանգուցեալը ծնած էր յ18 Մարտի 1845. շուրջ տար է մ'ի վեր յօղատապէ կը տառա-
պէր Վերջին օրերս ծանրանալով մեծ ջերմեւանդութեամբ ընդունեցաւ Եկեղեցւոյ վերջին
խորհուրդները և հանգեաւ ի էր Յրեւելի Տէր իբրեւ քաջ տրու ետադէտ և Ուսուցիչ . ստու-
ցած էր մեծամեծ պատուանշաններ : Յազարկաւ որութիւնը մեծ հանդիսաւ որութեամբ կա-
տարուեցաւ :

Տօգթ. Բէթաշիի մահը խորս պէս վշտացուց Ս. Քահանայապետը , որ անոր մաքի
ու սրտի ձորքերը զնահատած էր :

~*~*~*~

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ

Ոնցեալ հինգշաբթի՝ ամսոյ 4/17ին , կաթողիկոսարանի մէջ տեղի ունեցաւ քահանա-
յից համախմբումը՝ քարոյական դիպումոց ամսական գումարումին առթիւ , և հոգեւոր
ընթերցումէն վերջը սովորական տառաւածարանական փճարանութիւններն կատարուեցան :

* * Աթոռանիստ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ վարդարանի ընծայուած Հոկ-
տեմբեր ամսոյ մէջ ամէն օր երեկոյեան ժամը Յու կէսին Ս. վարդարան կը զուրցուի յա-
տուկ ջերմեւանդական աղօթքներով :

* * Ամենապ. Հոգեւոր Տէրն շնորհակալութեան և Օրհնութեան նամակ մը զրկած էր
առ Վսեմ. Պարոն Պիտրման ի Վիեննա , որ իւր պալատան և ամարանոցին մէջ իշխանափա-
յել ճոխութեամբ և հիւրամեծարութեամբ աւանջականած էր զԱրհի. Պետր. Արք. Գլոյն Ն-
եան և Ստեփ. Եպ. Իսրայէլեան Ս. Հոգորդ. վերջին Համաժողովին մէջ , Վսեմ. Պարոնն խու-
րապէս զգածուած այս շնորհագիծ նամակէն , Սեպտ. 29 թուակիր պատասխանագրով մը
իւր սրտագին շնորհակալիքն յայտներ է առ նորին Գերերջանկութիւն :

* * Գեր. Յովս. Վ. Սէեահեան Ամենապ. Հոգեւոր Տէրուն թոյլտուութեամբ ինքնաբե-
րաբար խնդրագիր մատուց առ Պատերազմական նախարարութիւն որպէս զի ինքն իբր հու-
գեւորական կամուար ընդունուի Բանակին մէջ՝ ռազմադաշտին վրայ հայրենեաց համար
կուռող կաթողիկէ զինուորներու հոգեւոր պետքերը հոգալու նպատակաւ : Նախարարը մե-
ծապէս գոհ մնալով և շնորհակալութիւն յայտնելով՝ զինքը կարմիր Մահիկի ընկերութեան
մէջ արձանագրել տուեր է : Բոլոր թերթերն ու քրիստոնեայ հասարակութիւնք յիշեալ վար-
դապետին սոյն նախաձեռնարկ խորհուրդը մեծ գնահատումով դրուատեցին , և միւս պատ-
րարքարաններն ալ ձեռնարկեցին միեւնոյն միջոցով իրենց քահանաները զրկել պատերազմի
գաշտին վրայ :

* * Ուսեպոյ թերթերէն , յորս նաեւ Մօսկ, մեր քաղած լուրերուն համոձայն իրի-
մու սահմանին մէջ գտնուող հայ կաթողիկէ եկեղեցին , որ ժամանակէ մ'ի վեր ուրիշ հա-

ստորակաթեան մը ձեռքին մէջ կը գտնուէր, Ռուսիոյ ամենայն Կաթողիկէ Հայոց Առաքելական Կառավարիչ՝ աշաղութը և քաղաքատաակ Գեր. Սարգիս Թ. Ծ. Վ. Տէր-Արքահամեանի ազդեցիկ գիմնաւներուն շնորհիւ Հռովմայ և Ռուս Կայսերական Կառավարութեան որոշողութեամբ վերադարձուած է Հայ Կաթողիկէ հասարակութեան. այս որոշողութիւնը Կրօնից նախարարութիւնը պաշտօնապէս հաղորդած է նոյն Առաք. Կառավարչին՝ 17 Սեպտ. թուականու:

*. Արհի. Անդր. Եպ. Զեյեպեան բաւական ժամանակէ ի վեր արդէն իր վիճակը հասած էր. սկսած է իր թեմական գործերով զբաղիլ: Յաջողութիւն կը մաղթենք իրեն:

*. Գեր. Վարդան Վ. Խաչէրեան որ կը պաշտօնավարէր ի Կեսարիա, ըստ կարգադրութեան Ամենապ. Հոգևոր Տեսուն, արդէն հասած է ի Զմեռու և ձեռնարկած է հոն իր նոր պաշտօնին:

*. Գեր. Վահան Վ. Գուլաքորդեան ուղեորելով յԱստանա, կարգուած է Զարջապուրի ժողովրդապետ:

*. Գեր. Յակոբ Վ. Նէսիհան Պէրսի փոխ.— ժողովրդապետ և Զմեռու փանոց գործակալ կարգուեցաւ:

~~~~~

#### Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Մ Ե Ր

Պաղատեան չորս տէրութեանց, այս է Պուլկարիոյ, Սերպիոյ, Գարատաղի և Յուստանի դէմ սկսուած պատերազմը կատարի կերպով կը մղուի: Դեսպանները երկուստեք մեկնեցան: Արդէն կը հասնին ընդհարումներու յուրերը: Ամսոյս 417 եջ. օրէն սկսեալ 36 ժամուան ահաւոր ճակատամարտ տեղի ունեցաւ բովանդակ սահմանադրութիւնի վրայ որ բնդարձակածաւալ ուսմանդարտի մը փոխուած է:

\*. Էտիրնէի մօտ Մուսթաֆա փաշայի Պուլկար սահմանադրութիւնի վրայ տահեի ճակատամարտ մը սկսած է օսմ. և Պուլկար բանակներուն միջեւ: Պուլկարները կատարի կերպով յարձակած են օսմ. սահմաններուն վրայ և ուզած են անցնիլ օսմ. սահմանադրութիւն և սակայն օսմ. բանակը հերոսական դիմադրութիւն մը չ'ոյց տուած է: 30 հազարի Պուլկար բանակ մը կատարելապէս ջախջախուած է:

\*. Կոստերազմական նախարարութիւնը պաշտօնապէս հաղորդեց երէկ զիշեր ուշ առտեն թէ Կոստանովայի չըչակայքն տմրացած և արեւմտեան Բանակին պատկանող Օսմանեան զօրքն յարձակեցաւ Մօրավայէն յառաջացող սերպ բանակին վրայ. որ կը բաղկանար գրեթէ չորս զարաւաթինէ, և բուն ճակատամարտէ մը վերջ թշնամին մեծ կորուստով նահանջեց: Օսմանեան զօրքը կը հաղածէ զինքը:

\*. Գարատաղի սահմանադրութիւնի բարձունքներուն վրայ բուն կռիւներ եղան: Գարատաղիները փոխան, թողլով տասը սնաուկ ուղեւորութիւնք, 50 վրան Երկու բարձրատաիճան սպայ, 4 սպայ 15 զինուոր սպաննուեցան:

\*. Թուրք զինուորները յարձակեցան Սերպ սահմանադրութիւնի վէրքա զիւղին վրայ, որ այրուեցաւ մէջի կիներն ու տղաքը գուրս հանուելէ ետք: Յառաջապահները կը յարձակին Էլաւանիոյ վրայ: Ականաւորները Սերպ սահմանադրութիւն ներս մտած են վէրքան կը պաշարեն: Սերպերը մեծ կորուստով կը փախչին դէպի Գուրշումու:

\*. Ուիւպէն կը հեռագրուի Հսկտ. 18 թիւով. «Մեր զինուորները Սերպիական երկու կարեւոր պահականցնէր գրաւեցին Զաղրու կոչուած տեղւոյն վրայ: Սերպ սպայ մը սպաննուեցաւ:»

\*. Պատերազմական եւ ծովային նախարար Մուսթաֆա փաշա երէկ Օսմ. զօրաց բանակատեղին մեկնեցան: Ծովային նախարարը զօրաւաժին մը հրամանատարութիւնը ստանձնեց:

\*. Յունաստան զիրեւէ կցեալ հռչակեց և կրեւտացի երեսփոխանները մեծ խանդա-

փառութեամբ ընդունեցաւ Աթէնքի երեսփ. Ժողովին մէջ: Պաշտպան տէրութիւնք կը դիմադրեն այս յանդուգն որոշման և կրէտէի չէզոքութիւնը կ'երաշխաւորեն՝ ամէն զնով:

\*. 30 ՄԱՐՏԱՆԱԽԵՐ ԿՐԷՏԷ Կ'ԵՐԹԱՆ. — Անգլ., Ֆրանսական և իտալական նաւարածիւններ, որոնք տասնական մարտանաւերէ կը բաղկանան, հրաման ստացած են մեկնիլ կրէտական ջուրերը:

\*. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ 29/Ն 45 ՏԱՐԵԿԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ. — Նախարարաց խորհուրդը վերջնականապէս որոշեց 29էն վեր տարիք ունեցող պոլսեցիները երբեք զէնքի տակ չառնել և իր որոշումը հետեւեալ կերպով մամուլին հաղորդեց. — Նկատի առնելով որ Պոլսոյ Ժողովուրդէն և այլ և այլ տարիք ունեցող ոչ իսլամ ազգերէն վեց տարիներու (քրիստոնեաներու զինուորագրութեան թուականին այս վեց տարիները 305, 304, 303, 302, 301, 300 թուականներու ծնողներն էին) մէջ գտնուողները միայն զինուորագրել որոշուած էր 325 տարւոյ 3ուլիս 25ի օրէնքին համաձայն, այդ օրէնքի հրատարակութենէն սկսեալ յիշեալ թուականներէն ուշ ծնողներու նկատմամբ զօրակոչի գործողութիւն պիտի չկատարուի: Այսինքն 29—45 տարեկանները զինուոր պիտի չլրլան: Սակայն թերթերը նոր կնճիւղներու լուր կու տան:

\*. ԻՏԱԼԵՍՈՐԻ ԲԱԵՏՈՒՄԵԱՆ ԱՅՈՒՄԱՆՆԵՐ. — Աւստրիկ Ափրիկեան Տրիպոլի ու Պէնկագիի ինքն օրինութիւն շնորհող կայս. Ֆէրմանը.

Իմ կառավարութիւնս մէկ կողմէն կ'ուզէ ձեզի օգնել ազգուապէս, ձեր երկիրը պաշտպանելու համար, որուն պէտք ունիք, բայց անոր անկարելիութիւնը կը տեսնէք: Ո՛րքա կողմէ կառ. փարութիւնը խորհելով ձեր ներկայ և ապագայ երջանկութեան վրայ, կ'ուզէ վերջ տալ կործանարար պատերազմի մը թէ՛ ձեզի և թէ՛ ձեր ընտանիքներուն, և ազետալի՝ պետութեան համար: Լեւեւաբար, խաղաղութիւնը և բարօրութիւնը ձեր երկրին մէջ վերահաստատելու յոյսով և մեր վեհապետական իրաւունքին վրայ հիմնուելով կատարեալ ինքնօրինութիւն կը շնորհեմ ձեզի: Զեր երկիրը պիտի կառավարուի նոր օրէնքներով և մասնաւոր կանոնադրերով, որպէս զի ձեր բարքերուն և սովորութեանց համապատասխանեան, պէտք է ձեր խորհուրդներով լուսարանէք ձեր հայրենակիցները և իբր տառաջնորդ ծառայէք անոնց: Պետական բարձրատախճան պաշտօնատար, Էփաֆի նախկին նախարար Շեմսէտտին պէյ, Մեճիտի և Օսմանիէ պատուանշաններու արժանացած, մեր կողմէ նախալէս-Սուլթան կարգուած է հաս. նախալէս-Սուլթանին արուած լիազօր իշխանութիւնը հինգ տարուան համար է: Այդ պաշտօնավարութեան շրջանը աւարտեալն, մեր կողմէ պիտի նորոգուի կամ յաջորդ մը պիտի նշանակենք: Մեր կայս. փափաքն է Շէրիի տրամադրութիւնները զսփառելու, ուստի մեր նպատակին իրագործումը ապահովելու համար, հարկ եղած Գաալին պիտի անուանուի մեր կողմէն: Այդ Գաալին նախկինը անուանման պիտի ձեռնարկէ, տեղացի իւրեմաներէ ընտրելով, Շէրիի տրամադրութեանց համաձայն Գաալին թողականները մեր կողմէ պիտի վճարուին. իսկ նախալէս Սուլթանին և Շէրիի միւս բոլոր պաշտօնատարներուն թողականները պիտի վճարուին տեղ. ոյն հասոյթներէն:

\*. Իտալական պաշտօնավարութիւնը կը հրատարակէ արքայական հրամ. նազիր մը, որ կ'ըսէ թէ՛ Երիւրոյ և Պէնկագիի խաղաղեցումն համար հրամայուած է հետեւեալը. 1. Կատարեալ և բացարձակ ներում շնորհուած է Տրիպոլի և Պէնկագիի այն բնակիչներուն, որոնք մասնակցած են պատերազմին կամ պատերազմին առթիւ գէշ արարք մը ունեցած են: 2. Տրիպոլի և Պէնկագիի բնակիչները պիտի շարունակեն վայելել՝ ըստ տառաջնոյն տաճնակատարեալ ազատութիւն իրենց իսլամական պաշտամունքին կիրառութեանը մէջ: 3. Սուլթանին անունը՝ իբր Խալիֆա պիտի շարունակուի արտասանուիլ իսլամներու հրապարակային աղօթքներուն մէջ և պիտի ճանչցուի Սուլթանին կողմէ անուանուած ներկայտրական շրջաններուն մէջ և պիտի ճանչցուի Սուլթանին կողմէ անուանուած ներկայտրական շրջաններուն մէջ: Կառավարութիւններուն իրաւունքները պիտի յարգուին ըստ տառաջնոյն, և ոչ մէկ արգելք պիտի դրուի իրենց կրօնական պիտի՝ Գաալին և նախկինը հետ ունեցած յարաբերութիւններուն Գաալին պիտի անուանուի Շէյխ-Իւլ-Իսլամին կողմէ, իսկ

նախկինը պիտի անուանուին Դատրին կողմէ: Սույնմանին փողմէ տնուանում ներկայացուցիչը պիտի հսկէ տէրութեան և օսմ. հպատակներու շահերուն, այն վիճակին մէջ ուր կը գտնուին նահանգներուն մէջ, 1910 փետրուար 12ի օրէնքէն յետոյ, որ Տրիպոլիսը և Պէնկագին իտալիայ գերիշխանութեան տակ կը գնէ: 4. Ուրիշ արքայական հրամանագրով մը պիտի կապուի յանձնաժողով մը, որուն պիտի տնդամակցին բնիկ երեւելիները և որ պաշտօն պիտի ունենայ երկու նահանգներուն համար առաջարկել քաղաքային և վարչային նոր կանոնագրութիւններ, որոնք հիմնուած պիտի ըլլան տեղական բարքերու և սովորութեանց ու ազատական սկզբունքներու վրայ:

#### Մ Ի Զ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Ի Ե Ի Բ

\*. ՄԻՔԱՏՈՅԻՆ ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐԹԻԹԻՒՆԸ:— Սեպտ. 4 ն.տ. թուականով Թոքիոյէ կը հեռագրուի. — Կոյսըն ու Կոյսրուհին աշար ի միասին ընդունեցան դեսպանական մարմնոյ անդամներն՝ որոնց ընկերացել էին նաեւ իրենց տիկինները. որ ցոյցմ աննախընթաց է: Վեհապետները անջատ ընդունելութիւններ կատարեցին: Յետոյ դեսպաններն մի առ մի անցան վոխճանեալ Մուցուհիթոյ Կայսեր դազաղին առջեւէն, իւրաքանչիւրն ալ անցած ատեն գլուխը խոնարհեցնելով Ապա ըստ երեցութեան կաղզի շարունեցան. և Ար Վրտ Մազտօնադա, Անգղ. Դեսպանը որ դեսպանական մարմնոյ երիցագոյնն է, յառաջացաւ ու կարգաց գաղղիներէն ճառ մը, յորում արքայական գերդաստանին կը յայտնէր ցաւակշուրութիւն, և հանգուցեալ Վեհապետին առաքնութեանց պատգամութիւնը կ'ընէր: Վերջը յանուն Դեսպանաց, արծաթեայ պտակ մը դրաւ դազաղին վրայ:

— Զօրավար Նոճի որ յողմակտնօրէն գրաւած էր Բորթ Արթիւրը Ռուս-ձարանական պատերազմի ատեն, Սիքատայ Մուցուհիթոյի թաղման հանգէսէն վերջը իր ամուսնոյն հետ ի միասին տնձնապան եղեր է:

Զօրավար Նոճիի մահուան աթիւ Օսմ. բանակի անունով պատերազմական Նախարար Նազըմ բաշա ձաբնիսյ պատ. Նախարարին ցաւակցական հեռագիր մ'ուղղեց և շնորհակալութիւն պատասխան մը ստացաւ:

\*. Ռուսիա կ'ուզէ գրաւել Մոնկոլիան. — Ռուսիա մտանդնելով շինական զինուորներու կատարած բարբարոսութիւնները, Զինատանէն կը պահանջէ իր զօրքերը հեռացնել Մոնկոլիայէն, հակառակ պարագային՝ կը սպառնայ իր պաշտպանութեան տակ առնել Մոնկոլները: Ռեչին կը հեռագրեն Մուքտէնէն որ փեքինի կառավարութիւնը հրաման հանած է անմիջապէս դադրեցնել ներքին Մոնկոլիայ մէջ պատերազմական գործողութիւնները և հաշտութեան բանակցութիւններ սկսիլ Մոնկոլներուն հետ:

\*. Ահաւոր Աղէսներ. — Ահաւոր թայֆուն մը (փոթորիկ) փրկած է ձափանի հարաւ արեւելեան մասին մէջ և 40 միլիոն եւի չափ վիթխարի փնտա մը հս. սցաւցած է: Կան բազմութիւ գոհեր: Հաղարուս մարդիկ մնացած են տնպատապար: Օսակայի մէջ քանդուած է 20 հազար տուն:

Նոյն աղէտը տեղի ունեցած է նաեւ Զիկեանկ (Զինատան) նահանգին մէջ, ուր կործանած են բազմութիւ գիւղեր և քաղաքներ: Մեռածներուն թիւը կը հասնի մինչեւ 40 հազարի, ըստ ճշգրտական թերթերու տեղեկութեանց:

#### Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

|                                                           |     |
|-----------------------------------------------------------|-----|
| Տէր Կոմիսսա Ք. Կանայ . . . . .                            | 593 |
| Իմաստութեան սկզբանց վրայ . . . . .                        | 596 |
| Վիեցնայի Ս. Հալոուրութեան Համագգային Համաժողովը . . . . . | 599 |
| Հերբուժ . . . . .                                         | 604 |
| Տեղեկագրական . . . . .                                    | 605 |

ԱՐՏՕՆԱՏԷՐ  
ՅՈՎԷ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՕՐԷՆ-ԻՄԱԳԻՐԱՊԵՏ  
ՔԵՆՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Օսմանեան Ինքնակալական Ընկ. Էպուսուուս հասեւի թիւ 27

## ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Հրատարակուեցաւ «Տարրական Սկզբունք Բրիտանական Վարդապետութեան, փոքրիկ տալոց համար, հաստատել Հոգեւոր իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ Հայ-Կաթողիկէ հաստատակութեան ամեն դպրոցներուն մէջ»: Կցուած են առօրեայ հարկաւոր տրոփները: Բաղկացած է 136 էջերէ:

Բովանդակութեան յորջ, սեղմեալ եւ պարզ ոճով շնորհիւ դրարոցականներու ամենէն օգտակար եւ յանձնարարելի գրքոյկ մընէ անհրաժեշտ:

Դիւնը տնտեսական կերպով աժան է. ամուր քղթակազմը՝ 2 դահեկան միայն:

Դիւնը՝ Կ. Պոլիս, Բերա, Պայրամ փողոց Թիւ 5:

«ԿԱՌՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ Պատրիարքարան պատշոնական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյլ ամեն յուրերն՝ համառօտաւած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերք կարդալու :

ԲԱՏԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան . . . . . 'Ինեկ . արծ. 40

Վեցամսեայ . . . . . » » 20

Արտասահման

Տարեկան . . . . . Ֆրանկ 10

Վեցամսեայ . . . . . » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Բոսնով եւ կամ մէկ մէկ չրեւոց նամակադրուով :

Մէկ թիւ 1 Դանեկան



Նաման . յօդուած . եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱՌՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Բերա, Պայրամ փողոց Թիւ 5

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

5 Rue Baïram 5

Péra

Constantinople

- ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանց կը հրատարակուի շաբաթ օրերը:  
2.— Խմբագրութիւնն պատշաւորեալ չէ անպատշաւտ կամ նշանութեամբ հրատարակել իրեն դրկուած ու եւ է յօդուած:  
3.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:  
4.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:  
5.— Նշանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կրկնաւորուին: